ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ՀԱՅԱՋԻՆՋ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1915—1916 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Պատմ. գիտ. դոկտոր Ե. Ղ. ՍԱՐԳՍՅԱՆ

Արևմտահայության ֆիզիկական բնաջնջման իր հրեշավոր ծրագիրը թուրքական բռնակալությունը մշակել էր դեռևս անցյալ դարի 70-ական թվականներին։ Ժամանակին այդ ծրագրի մասին բացահայտորեն արտահայտվել է սարյունարբու Արդուլ Համիդի համախոհ Քյամիլ փաշան, որը երկար տարիներ գրավում էր մեծ վեզիրի պաշտոնը։ Խոսելով Եվրոպական Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդների ազատագրական շարժումների և արևմտյան տերությունների միջամտության մասին, նա լկտիաբար ասել է. «... Եթե Եվրոպական Թուրքիայում մենք տաքացրել ենք օձերին (խոսքը 1876 թ. Թուրքիայի դեմ ապստամբած սլավոնների մասին է—Ե. Ս.), ապա Ասիական Թուրքիայում մենք չպետք է կրկնենք այդ նույն հիմարությունը, խելամտությունը պահանջում է ոչնչացնել և մեր հողի երեսից ջնջել բոլոր այն տարրերին, որոնք կարող են հետագայում վտանգ սպառնալ մեզ... Հետևաբար, այդ սրբազան նպատակին հասնելու համար անհրաժեշտ է հայ ազգն անհետ ջնջել մեր հողի երեսից, անխնայորեն բնաջնջել... ազգ... որը զենք և պաշտպանություն չունի...»[1]։

Քյամիլ փաշայի կառավարության մշակած հրեշավոր ծրագիրը բացահայտ կերպով սկսեց կիրառվել 1894—96 թթ., երբ Արևմտյան Հայաստանում կազմակերպվեցին մի շարք մասսայական ջարդեր, որոնց հետևանքով զոհվեց 300 հազար մարդ։ Հրկիզվեցին և հողին հավասարվեցին ավելի քան 3000 հայկական գյուղեր, տասնյակ հազարավոր հայեր իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու համար ստիպված էին թողնել հայրենիքը և ցրվել ամբողջ աշխարհում։

Արդուլ-Համիդի չարդարարական քաղաքականությունն ավելի լայն մասշտաբներով շարունակեց Երիտթուրքերի «Իթթիհատ վե Թերաքքի» («Միություն և առաջադիմություն») կուսակցությունը՝ 1908—1909 թթ. տեղի ունեցած վերնախավային հեղափոխության հետևանքով կառավարության դեկը իր ձեռքը վերցնելուց հետո։ Իթթիհատական պարագլուխների կողմից անցկացվող՝ Օսմանյան կայսրության մահմեդական տարբեր ժողովուրդներին ձուլելու, իսկ քրիստոնյա բնակչությանը ֆիզիկապես ոչնչացնելու վայրենի քաղաքականության առաջին արտահայտություններից մեկն էր 1909 թ. գարնանը Ադանայի հայերի զանգվածային կոտորածը։ Ականատեսներից մեկը՝ Հելեն Գիրոնսը, նկարագրելով ջարդի մանրամասնությունները նշում է, որ հայերին անողոքաբար կոտորում և գնդակահարում էին փողոցներում, կենդանի այրում էին այն տներում, որտեղ նրանք պատսպարվում էին։ Չէին խնայում ո՛չ ծերերին, ո՛չ

---

1 Տե՛ս «Փորձ», 1879, № 7—8, էջ 204—205։

կանանց, ոչ էլ երեխաներին։ «Այդ ջարդն ավելի սարսափելի էր,— եզրակացնում է հեղինակը,— քան Արդուլ Համիդի ժամանակներում»։

Հայերի ջարդ տեղի ունեցավ նաև Կիլիկիայի մյուս քաղաքներում ու գյուղերում։ 1909 թ. ջարդերի հետևանքով Կիլիկիան կորցրեց մոտ 30 հազար հայ։ Խոսելով Կիլիկիայի կոտորածներից հետո հայերի նկատմամբ Երիտթուրքերի վարած քաղաքականության մասին, Ստամբուլում ցարական դեսպանության թարգման Մանդելշտամը գրում էր, որ նրանց ոչնչացումը շարունակվում էր դանդաղ, բայց անշեղորեն[2]։

Երիտթուրքերի պարագլուխները Թուրքիան նետելով առաջին համաշխարհային պատերազմի մեջ՝ Գերմանիայի կողմում, նպատակադրվել էին վերջինիս օգնությամբ իրագործել իրենց պանիսլամական ու պանթուրքական դավթողական պլանները։ Սակայն այդ նվաճողական ձգտումների իրագործման ճանապարհին կանգնած էին Թուրքիայի բիրտ լծի տակ գտնվող ոչ թուրք ժողովուրդները՝ հայերը, արաբները և մյուսները, որոնք շարունակում էին իրենց ազգային-ազատագրական պայքարը։ Երիտթուրքերի ղեկավարների կարծիքով պանթուրքական նվաճողական ծրագրերի իրագործման գլխավոր արգելքը հայ ժողովուրդն էր։ Ինչպես բազմիցս հայտարարել են երիտթուրքական կուսակցության թերթերը և գործիչները, մահմեդական աշխարհի մեջ «սեպի նման խրված» հայերը խանգարում էին Օսմանյան կայսրության հետ Անդրկովկասի և Ռուսաստանի այլ շրջանների մահմեդական ազգաբնակչության «միավորմանը»։ Այսպես, երիտթուրքերի օրգան «Իկդամ» թերթը տակավին 1914 թ. փետրվարին առաջարկում էր բոլոր հայերին Արևելյան Անատոլիայից աքսորել Միջագետք, իսկ նրանց տեղը բնակեցնել մահմեդականներին[3]։

1915 թ. հայկական ջարդերի կազմակերպիչներից մեկը՝ Երիտթուրքերի կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ դոկտոր Բեհաեդդին Շաքիրը հայտարարել է. «Հայերը մեր պանիսլամական ու պանթուրքական սրբազան գաղափարների ճանապարհին են կանգնել, և մենք անխուսափելիորեն բախվում ենք նրանց հետ... Մենք ստիպված ենք մեր ճանապարհին տարերայնորեն ոչնչացնել այն ամենը, ինչը արգելք է հանդիսանում մեր սրբազան ազգային իդեալներն ի կատար ածելու համար»[4]։ Անգլիական «Նյու Օրլինտ» թերթը Հայաստանին նվիրված հոդվածներից մեկում նշում էր. «Այդ երկիրը գտնվում է հենց այն ճանապարհի վրա, որը տանում է դեպի Կովկաս և Կենտրոնական Ասիա, ուր ձգտում էին Երիտթուրքերը։ Ահա այս հանգամանքն ավելի, քան թշնամանքի զգացումը, այն բանի պատճառը դարձավ, որ մեծ պատերազմի շրջանում թուրքերը ձգտում էին ոչնչացնել հայ ժողովրդին»[5]։

Իթթիհատական կուսակցությունն ու նրա կառավարությունը իրենց պանթուրքական զավթողական ծրագրերը իրագործելու համար տակավին համաշխարհային պատերազմից առաջ սկզբունքորեն որոշել էին ոչնչացնել Թուրքիայում բնակվող բոլոր հայերին։ Սակայն, ինչպես ասված է Թալեաթ փաշայի 1915 թ. գարնանը տեղական իշխանություններին հղած գաղտնի գրկուցում

---

[2] Mandelstam A., Le sort de l'Empire ottoman, Paris, 1919, էջ 212։

[3] Տե՛ս Ռուսաստանի պետական կենտրոնական ռազմա-պատմական արխիվ (Մոսկվա), ֆ. 2000, ցուցակ 1, գործ 38, թերթ 83։

[4] Տե՛ս «Заря Востока», 1925, № 812։

[5] Տե՛ս Հայկական ՍՍՌ պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 200, գործ 241բ թ. 681։

«Հանգամանքները թույլ չտվին կատարելու այդ սրբազան գործը»[6]։ Այժմ օգտվելով ռազմական իրադրությունից, երիտթուրքերը ձեռնարկեցին հայկական հարցի «լուծմանը», որը Ջեմալ-փաշայի խոսքերով ասած՝ «երկրի ներքին կյանքի կարևորագույն հարցն էր»[7]։

Հենց որ Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ մտավ, երիտթուրքական կոմիտեն ձեռնամուխ եղավ երկրի հայ ազգաբնակչությանը գլխովին ոչնչացնելու ծրագրի մանրամասն մշակմանը։ Այն հաստատվեց Թալեաթ փաշայի ղեկավարությամբ. 1915 թ. սկզբներին կայացած երիտթուրքական կենտրոնական կոմիտեի գաղտնի նիստում։ Նիստի ընթացքի և ընդունված որոշումների մասին մանրամասն գրում է իր հուշերում երիտթուրքական կոմիտեի անդամ Մեվլան-զադե Ռիֆաթը, որը մասնակցել էր այդ խորհրդակցությանը։ Հանգամանորեն խոսելով Թալեաթի նախագահությամբ գումարված գաղտնի նիստի մասին, որին մասնակցում էին Էնվերը, դոկտոր Նազըմը, դոկտոր Բեհաեդդին Շաքիրը, Կարա Քեմալը, Հասան Ֆեհմին, Ջավիդը և Ագա Օղլու Ահմեդը, Մեվլան-զադեն նշում է, որ հիմնական զեկուցողը երիտթուրքական կոմիտեի պատասխանատու քարտուղար դոկտոր Նազըմն էր, որն իր ելույթում ասել է. «Եթե 1909-ի մեր Ադանայի և այլ վայրերու մեջ կատարել տվածին նման տեղական ջարդերով պիտի գոհանանք, ...եթե այս մաքրագործումը ընդհանուր և վերջնական չպիտի ըլլա, օգուտի տեղ վնասը անպայման է, պետք է, որ հայ ազգը արմատախիլ ըլլա, մեր հողին վրա անհատ մը անգամ չմնա, հայ անունը մոռցվի։ Հիմա պատերազմի մեջ ենք, ասկե հարմար առիթ չի գտնվիր. մեծ պետություններու միջամտությունը և թերթերու բողոքի ձայնը նկատելի իսկ չի կրնար ըլլալ, ըլլա նույնիսկ, խնդիրը կատարված իրողություն մը կդառնա և կփակվի։ Այս անգամվան գործողությունը բնաջնջումի գործողություն մը պիտի ըլլա, հայերու մեկ անհատ մը իսկ չմնալու պայմանով բնաջնջումը հարկ է։ Թերևս ձեզմե ոմանք ըսեն, որ այսչափը վայրագություն կըլլա, երեխաներեն, ծեր և տկարներեն ի՞նչ վնաս կրնա հասնիլ, որ ասոնց ամբողջին ալ բնաջնջման հարկ տեսնվի, ով որ հանցավոր է, ան կպատժվի... Խնդրեմ, պարոններ, այսչափ տկար և գթասեր մի՛ ըլլաք.— շարունակում է թուրք մարդակերը,— ասիկա մահացու հիվանդություն մըն է»[8]։

Հիշյալ գաղտնի նիստի մի այլ մասնակից՝ Հասան Ֆեհմին իր ելույթում «պարզաբանում» է հայերին բնաջնջելու եղանակը. «Մեկ անհատ մը իսկ չմնալու պայմանով բնաջնջումը օրինական է... ասվածին համաձայն, ծեր, երեխա, կին, անկարող նկատի չառնվիր և բոլորը կբնաջնջվին։ Ես բնաջնջումի դյուրին ձև մը կխորհեմ. հիմա պատերազմի մեջ ենք, հայերու զենք վերցնելու կարող երիտասարդները պատերազմի առաջին գիծը կղրկենք, հոն՝ դիմացնեն ռուսերուն, իսկ ետևեն՝ մեր կողմեն մասնավոր կերպով ղրկված ուժերուն կրակի մեջ կառնենք և կբնաջնջենք. իրենց տունը մնացող տկար ու ծերերը, կին ու երեխաները ալ կհրամայենք և մեր հավատացյալները կմաքրեն, ինչքերնին կկողոպտեն... այս ձևը հարմար կտեսնվի»[9] (ընդգծումը մերն է — Ե. Ս.)։ Ամ-

[6] Տե՛ս "The Memoirs of Naim Bey. Turkish official Documents relating to the Deportations and Massacres of Armenians", London, 1920, էջ 7։

[7] Джемаль-паша, Записки 1913—1919 гг., Тифлис, 1923, էջ 80։

[8] Մեվլան-զադե Ռիֆաթ, Թուրքական հեղափոխության մութ ծալքերը։ Թարգմ. թուրքերենից, Բեյրութ, 1938, էջ 159—260։

[9] Նույն տեղում, էջ 164—165։

բողջ մի ժողովուրդ ոչնչացնելու այս հրեշավոր ծրագրին հավանություն տալով, Էնվերն ավելացնում է, որ «բնաջնջման եղանակը որոշելը գործադիր մարմնին պարտականությունն է»[10]։

Ստեղծվում է եոյակ՝ «գործադիր հանձնախումբ» (դոկտոր Նազիմ, դոկտոր Բեհաեդդին Շաքիր և կրթական նախարար Շուքրի), որը հանդում է այն եզրակացության, թե այդ ահավոր սպանդի անմիջական կատարողները պետք է լինեն մարդասպանության և ոճրագործության համար բանտերում գտնվող հանցագործները, որոնց ազատ արձակելով, իրենք մեկ ամսվա ընթացքում 10—12 հազար ընտրյալ ուժի տեր կդառնան և դրանք բաժանելով՝ «նվազագույնը 10, իսկ առավելագույնը՝ 50 հոգուց բաղկացած ջոկատների՝ չեթեների, նրանց վրա վստահելի խմբապետներ կնշանակեն և իրենց հրամանին կենթարկեն»»[11]։

Ղեկավարվելով կենտրոնական կոմիտեի գաղտնի նիստի որոշմամբ, երիտթուրքական կառավարությունը 1915 թ. ապրիլի 15-ին տեղական իշխանություններին հայերի աքսորի և ոչնչացման մասին գաղտնի հրահանգ ուղարկեց։ Այն ստորագրել էին ներքին գործերի մինիստր Թալեաթը, ռազմական մինիստր Էնվերը և երիտթուրքական կոմիտեի քարտուղար դոկտոր Նազիմը։

Հիշյալ հրահանգում ասվում էր, որ կառավարությունն ու «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեն որոշել են «օգտվելով պատերազմի՝ մեզ ընձեռած հնարավորությունից, վերջնականապես վերացնել հայերին, մեր կողմից տրված գաղտնի հրահանգի համաձայն...»[12]։

Երիտթուրքական կառավարությունն իր բարբարոսական ծրագրի իրականացումը սկսեց 1914 թ. աշնանը թուրքական բանակ զորակոչված 20-ից մինչև 45 տարեկան հայերի ոչնչացումով։ Հայ զինվորները զինաթափ արվեցին։ Նրանցից 1914—1915 թթ. ձմռանը կազմվեցին բանվորական գումարտակներ, որոնց օգտագործում էին ճանապարհների կառուցման և քաղաքային աշխատանքներում։ 1915 թ. ապրիլին հաշվվում էին շուրջ 120 այդպիսի գումարտակներ, որոնք բաժանված էին ջոկերի։ Սրանցից յուրաքանչյուրում կար 300—500 մարդ, որոնք աշխատում էին սարսափելի պայմաններում։

«Թուրքական կանոնավոր գնդերը, — գրում է Գիբոնսը, — անսպասելիորեն հարձակվում էին այդ ջոկերի վրա, որոնք խաղաղ աշխատում էին բրիչներով, լինգերով ու բահերով, և մինչև նրանք ուշքի կդային՝ գնդակոծում էին բոլորին։ Եթե որևէ մեկը փորձում էր դիմել փախուստի, նրան հետապնդում էին հեծյալ թուրքերը և սրախողխող անում կամ գնդակահարում»[13]։ Այդ եղանակով 1915 թ. գարնանը սպանվեցին մոտ 6 հազար հայ զինվորներ, որոնք աշխատում էին Կարին-Երզնկա, Դիարբեքիր-Ուրֆա և Դիարբեքիր-Խարբերդ ճանապարհների շինարարության վրա։

Հայ զինվորներին ոչնչացնելուց հետո երիտթուրքերը հաշվեհարդար տեսան հայ ակտիվավոր գործիչների հետ, այդ թվում մեջլիսի պատգամավորների ու հայ մտավորականության խոշորագույն ներկայացուցիչների հետ, որոնց

10 Նույն տեղում, էջ 165։

11 Նույն տեղում, էջ 191—193։

12 Նույն տեղում, էջ 197—198։

13 Гиббонс Герберт-Адамс, Последние избиения в Армении. Факты и ответственности. Пер. с англ., П-д, 1916, էջ 12—13։

բողոքի ձայներ թուրքական գազանությունների դեմ կարող էր հնչել սահմանիս այն կողմ։

Միայն Կոստանդնուպոլսում ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը ոստիկանությունը ձերբակալեց 235 անվանի հայ մտավորականների, իսկ հաջորդ մի քանի օրվա ընթացքում՝ ևս մի քանի հարյուր մարդ։ Նրանք բոլորը՝ շուրջ 600 հոգի, գազանաբար սպանվեցին աքսորի ճանապարհին, իրենց նշանակված վայրը՝ Անկարա, Կոնյա և Դիարբեքիր չհասած։ Գերմանացի դոկտոր Իոհաննես Լեփսիուսի վկայությամբ, միայն 8 հոգու հաջողվեց փրկվել մահից[14]։ Նույն ճակատագրին արժանացավ հայ մտավորականությունը երկրի այլ քաղաքներում։

Երիտթուրքերի կոմիտեի որոշման համաձայն՝ 1915 թ. ապրիլին Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի վիլայեթները հրաման ուղարկվեց հայերի զինաթափման մասին, որն ուղեկցվում էր ամեն տեսակի բարբարոսություններով, արյունալի ընդհարումներով ու զանգվածային ձերբակալություններով։ Զգալով վերահաս բռնությունների վտանգը, հայերի մի մասը զենքը ձեռքին փախավ անտառները ու լեռները։

Այդ գործողությունը անցկացնելուց հետո Ստամբուլից երկրորդ հրամանը ստացվեց՝ հայերին աքսորել Միջագետք։ Հայերի աքսորն ու զանգվածային ջարդը միևնույն եղանակով իրականացվեցին կայսրության ավելի քան 50 վայրերում։ Տեղական իշխանությունները մեծագույն ճշտությամբ էին կատարում Թալեաթի բոլոր կարգադրությունները[15]։ Մանդելշտամը նշում է, որ երկրի «մաքրագործումը» հայ ազգաբնակչությունից տևեց 1915 թ. ապրիլի 24-ից մինչև նոյեմբերի 6-ը[16]։

Տեղական իշխանություններն առաջին հերթին հաշվեհարդար էին տեսնում տղամարդկանց հետ։ Սովորաբար 15-ից մինչև 70 տարեկան բոլոր հայ տղամարդիկ կանչվում, հավաքվում էին մի տեղում և այնուհետև քշվում քաղաքից կամ գյուղից դուրս և գնդակահարվում ոստիկանների կողմից[17]։ Մայիսի սկզբին սկսվեց հայերի աքսորը անատոլիական վիլայեթներից ու Կիլիկիայից դեպի Միջագետքի շրջանները՝ Բաղդադի երկաթուղուց հարավ։ «Մայիսից մինչև հոկտեմբեր, — գրում է Գիբոնսը, — օսմանյան կառավարությունը սիստեմատիկորեն կիրառում էր մի ծրագիր, որն ավելի դժոխային էր, քան ամենասարսափելի ջարդը։ Ամբողջ Փոքր Ասիայով մեկ հրամաններ էին ուղարկվում հայ ազգաբնակչությանը Միջագետք աքսորելու մասին։ Հրամանները միանգամայն որոշակի էին ու շատ մանրամասն։ Ոչ մի գյուղ, անգամ աննշան, չէր մոռացվել։ Մունետիկները բարձրաձայն կարդում էին հայերին արված կարգադրությունը՝ այսինչ ժամին պատրաստ լինել ճանապարհվելու՝ անհայտ ուղղությամբ։ Բացառություն չէր արվում ո՛չ հիվանդների, ո՛չ ծերերի, ո՛չ էլ հղի կանանց համար»[18]։

Հայերին աքսորելուց հետո, նրանց տները ու ամբողջ ունեցվածքը բռնագրավվում էին ու բաժանվում մահմեդականներին։ Հարուստ հայերին հաճախ

---

[14] Lepsius J., Deutschland und Armenien 1914—1918, Sammlung diplomatischer Aktenstucke, Potsdam, 1919, էջ XX։

[15] Toynbee Arnold Y., Armenian Atrocities The Murder of a Nation, London—New-York, 1915, էջ 29։

[16] Mandelstam, էջ 283—284։ Տե՛ս նաև J. Lepsius, էջ XXV։

[17] Гиббонс Герберт-Адамс, էջ 13—14։

[18] Նույն տեղում։

թույլատրվում էր բարձր վճարով սայլ կամ ձի վարձել, որոնք սակայն խլվում էին նրանցից՝ քաղաքից կամ գյուղից դուրս գալուց անմիջապես հետո, այնպես որ, ինչպես աղքատներին, նույնպես և հարուստներին մնում էր միայն այն, ինչ նրանք կարող էին իրենց հետ վերցնել։ Թուրք ազգաբնակչությանն արգելված էր հայերին մթերքներ վաճառել կամ նրանցից իրեր գնել, ուստի և տեղահանված հայերն ի վիճակի չէին իրենց ապահովել ճանապարհի համար անհրաժեշտ պաշարով։

Առաջին միջոցառումն այն եղավ, որ տղամարդկանց բաժանեցին կանանցից, իսկ ընտանիքի անդամներին՝ իրարից։ Աքսորից առաջ ամենագեղեցիկ կանանց ու աղջիկներին բռնի կերպով առանձնացնում էին՝ մեծահարուստ թուրքերի ու քրդերի հարեմներն ուղարկելու համար։ Կանանց, ծերերի ու երեխաների հոծ զանգվածները թուրք ոստիկանների ու ասքյարների կողմից քշվում էին Անատոլիայի լեռնանցքներով, կիզիչ արևի ճառագայթների տակ[19]։

Հազարավոր հայեր մեռնում էին ճանապարհին սովից, ծարավից, արևհարությունից, ուժասպառությունից։ Նրանց, ովքեր այլևս անկարող էին առաջ շարժվել, անմիջապես սվինահար էին անում կամ գնդակահարում։ Ճանապարհի որոշ բաժիններում՝ Քեմախ-Բողազի մոտ՝ Եփրատի ափին և Երզնկայի ու Խարբերդի միջև ընկած տարածության վրա զանգվածային գնդակահարություններ տեղի ունեցան։ Այն ճանապարհը, որով անցնում էին տեղահանված հայերը, նրանց համար դարձավ մահվան ճանապարհ։ Ականատեսներից շատերը, ինչպես և այդ դեպքերի մասին գրած հեղինակները, իրավացիորեն նշում էին, որ այդ աքսորը, ըստ էության, Թուրքիայի հայ ազգաբնակչության բռնագրկված ոչնչացումն էր։ «Տեղահանումը,— ասվում է փաստաթղթերից մեկում,— սոսկ մի պատրվակ և, միաժամանակ, մի նոր միջոց էր թուրքական կառավարության ձեռքին, որը վաղուց էր մշակել հայերի բնաջնջման ծրագիրը։ Բացահայտ կոտորածի ու ջարդերի փոխարեն, այժմ հայերին ոչնչացնում են աքսորի ճանապարհով»[20]։

Նույնիսկ Էրցբերգերը՝ Գերմանիայի կաթոլիկական կենտրոնի կուսակցության առաջնորդը, որը հաճախ էր հանդես գալիս երիտթուրքերի պաշտպանությամբ, այս անգամ անկարող եղավ հերքել եղած հրեշավոր փաստերը։ Երիտթուրքական ղեկավարներին ուղղված իր գրության մեջ (1916 թ. փետրվարին) նա գրում էր. «Երկրի խորքից, ազգությամբ ոչ հայ ականատեսներից ստացվող հաղորդումները այն աստիճան սարսափելի են, որ դրանք հնարավոր չէ արտահայտել թղթի վրա։ Դարձյալ էր ենթադրել, որ աքսորն ավելի մեղմ պատժիչ միջոց է, քան սպանությունները։ Իրականում, սակայն, մեկը մյուսից շատ քիչ է տարբերվում։ Այն դեպքում, երբ համընդհանուր ջարդի ժամանակ ոմանց հաջողվում էր փախչել, թաքնվել կամ փրկվել լեռներում, տեղահանման պայմաններում կյանքը պահպանելու հույսը չափազանց աննշան է։ Մարդկանց քշում են նշանակման վայրը շաբաթներով ու ամիսներով, ինչպես անասունների... Խեղճերը մահանում են զանգվածներով՝ սովից ու համաճարակից։ Երբ նրանք տեղ են հասնում, այնտեղ էլ նրանց չեն թողնում մնալ, քշում են մի տեղից մյուսը, հանգիստ չտալով»[21]։

---

[19] Charles Woods, The Cradle of the War, Boston, 1918, էջ 71։

[20] Վրացական ՍՍՌ կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 2, գործ 3599, թ. 15։

[21] Эрцбергер М., Германия и Антанта, М.—П., 1923, էջ 83։

Դոկտոր Լեփսիուսը, հանդես գալով Թալեաթ փաշային սպանող Սողոմոն Թեյլերյանի դատի ժամանակ (1921 թ. հունիս) համոզիչ կերպով ցույց տվեց, որ հայերի աքսորի վերաբերյալ Թալեաթի հեռագրում ուղղակի պարզաբանվում էր, թե «աքսորը նշանակում է ոչնչացում»։ Աքսորատեղին հասավ հայերի միայն 10 տոկոսը,— ընդգծում էր Լեփսիուսը։ Մնացածները սպանվեցին կամ մեռան սովից ու անտանելի տանջանքներից[22]։ Լեփսիուսը իր հայտնի «Գերմանիան և Հայաստանը» փաստերի ժողովածուում հարուստ սկզբնաղբյուրների հիման վրա եզրակացնում էր. «Ոչ մի կասկած չկա, որ խոսքը ոչ թե կայսրության անվտանգության նպատակին ուղղված ռազմական միջոցառումների, այլ հայ ժողովրդի ծրագրված ոչնչացման մասին էր»[23]։

Ականատեսները ամբողջ աշխարհին պատմեցին թուրքական իշխանությունների կողմից աքսորված հայերի նկատմամբ գործադրված անմարդկային, հրեշավոր չարագործությունների մասին։ Կոմպոզիտոր Ռոմանոս Մելիքյանը, որն այցելել էր Արևմտյան Հայաստան՝ հայերի կորուստների թիվը պարզելու համար, հաղորդում էր. «Մուրադ-չայ գետի հովտում, ինչպես նաև Վանա լճի ու Խոշափ-չայ գետի ափերին և Արաքսի վերնահոսանքում ես տեսա հայերի անհամար քանակությամբ դիակներ, գերազանցապես կանանց ու երեխաների, որոնց ջուրն ափ էր շպրտել։ Նրանց կենդանի նետում էին ջուրը թուրքական ասքյարները, երբ բոլորին Կարինի վիլայեթից քշում էին Միջագետք»։

Զանգվածային ջարդի պատմությունը և հատկապես 1915 թ. մայիսից մինչև հուլիսն ընկած ժամանակամիջոցում հայերի կրած կորուստները ուսումնասիրող անձանց հաշվումներով, միայն Բաղեշի ու Կարինի վիլայեթի մի մասում թուրքերը սրի էին քաշել 136 հազար հայերի[24]։ Երբ ռուսական զորքերը գրավեցին Կարինը, քաղաքի մոտ հայտնաբերեցին 12 մեծ փոս, որոնք լցված էին ողջ-ողջ թաղված հայերի դիակներով։ Կարինի վիլայեթի 215 հազար հայ ազգաբնակչությունից կենդանի էր մնացել ընդամենը 2000 մարդ։ Պատերազմից առաջ Կարինում բնակվող 18000 հայերից ռուսական զորքերը մտնելու ժամանակ կենդանի էին մնացել 120 հոգի։

Եթե Կիլիկիայի, Սեբաստիայի, Կարինի վիլայեթների հայերը մեծ մասամբ աքսորվեցին ու ոչնչացվեցին դեպի Մոսուլ ընկած ճանապարհին, ապա գինվորական իշխանություններին ենթակա Բաղեշի, Մուշի, Սղերդի ու Դիարբեքիրի վիլայեթների հայերը կառավարության հատուկ հրամանի համաձայն սրի քաշվեցին տեղերում։

Բնորոշ է թուրքական իշխանությունների կազմակերպած ջարդը Բաղեշում։ Հունիսին թուրքական զորքերն անսպասելիորեն շրջապատեցին քաղաքը։ Հայերին արգելեցին դուրս գալ իրենց թաղամասերից։ «Այնուհետև սկսվեց ջարդը,— գրում է ականատեսներից մեկը։ Քաղաքի ամբողջ հայաբնակ մասը սպանդանոցի վերածվեց։ Սպանելով բոլոր տղամարդկանց, թուրքերը հրապարակ դուրս բերին կանանց ու երեխաներին ու քշեցին նրանց Սղերդ։ Ճանապարհին նրանց բոլորին կոտորեցին ու թաքցրին փոսերում»[25]։

---

22 «Դատավարություն Թալեաթ-փաշայի», սղագրական զեկուցում, Վիեննա, 1921, էջ 90։

23 Lepsius J., Deutschland und Armenien 1914—1918, էջ XXIV—XXV։

24 Հայկական ՍՍՌ կենտրոնական պետական պատմ. արխիվ, ֆ. 200, գործ 95, թ. 128.

25 Վրացական ՍՍՌ կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 2, գ. 3599, թ. 185։

Թուրքական մի սպայի պատմածից երևում է, որ Բաղեշի հայերի մեծ մասը ոչնչացվեց քաղաքի ամրոցից դուրս։ Դիակները նետվում էին Թուրք զինվորների կողմից վաղօրոք փորված փոսերը։ Բաղեշի վիլայեթի իշխանությունները «հայերին քշում էին ծղոտով լցված կալերը, տների դռները ծղոտապատում և հրկիզում։ Հայերը խեղդվում էին ծխի մեջ ու տեղում մեռնում։ Սակայն մեծ մասը զոհվում էր դնդակից, դաշույններից»[26]։ Բաղեշը գրաված ռուսական զորքերի ու հայ կամավորների առջև սարսափելի մի տեսարան բացվեց։ Վիլայեթի գյուղերում ու բուն Բաղեշում հայտնաբերվեցին մարդկային բազմաթիվ կմախքներ ու ոսկորներ։ Բոլոր ջրհորները, որտեղ տեղական բնակիչները սովորաբար պահում էին իրենց մթերքի պաշարները, լցված էին մարդկանց ոսկորներով։ Բաղեշի շուրջ 18 հազար հայ բնակիչներից կենդանի էին մնացել մահմեդական կրոնը ընդունած մոտ 300—400 կանայք ու երեխաներ։ Զանգվածային ջարդերի հետևանքով Բաղեշի վիլայեթը դատարկվել էր 180 հազար հայ ազգաբնակչությունից։

Նույն ճակատագրին արժանացան նաև Մուշի, Սզերդի, Դիարբեքիրի վիլայեթների հայերը։ Երբ ռուսական զորքերը հայ կամավորների հետ միասին, արյունահեղ մարտերից հետո, 1915—16 թթ. Թուրքական բիրտ լծից ազատագրում էին վերոհիշյալ հայկական վիլայեթները, նրանք ամենուրեք տեսնում էին դիակներ, ամայի դաշտեր ու ավերակներ։

Թուրքական իշխանությունները արյունոտ դատաստան տեսան ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլև Կենտրոնական Անատոլիայում, Փոքր Ասիայի արևմտյան վիլայեթներում ու Թրակիայում բնակվող հայերի նկատմամբ։

Հայերին գլխովին չաքսորեցին միայն երկու քաղաքներից՝ Ստամբուլից և Զմյուռնիայից։ Դա բացատրվում էր նրանով, որ այդ քաղաքներում էին գտնվում չեզոք տերությունների բազմաթիվ ներկայացուցիչներ։ Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և այլ տեղերի հայերին ոչնչացնելու իրենց ծրագիրը մինչև վերջ իրականացնելու համար երիտթուրքերը ձգտում էին համաշխարհային հասարակական կարծիքից թաքցնել իրենց չարագործությունները։

Զանգվածային ջարդերից ու աքսորից բացի, հայերին վերջ տալու մեթոդներից մեկն էլ նրանց բռնի թուրքացումն էր։ Բռնի թուրքացման ենթարկվեցին մոտ 200 հազար հայեր, գերազանցապես կանայք ու երեխաներ։

Հեշտ չէ որոշել ջարդերի ու աքսորի հետևանքով նահատակված հայերը ստույգ թիվը. Ըստ եվրոպական լեզուներով լույս տեսած պաշտոնական հրատարակությունների և բազմաթիվ աշխատություններում բերված տվյալների՝ օսմանյան կայսրության 2,5 միլիոն հայության մեկ միլիոնից ավելին նահատակվեց մեծ եղեռնի ժամանակ[27]։

Ժամանակին բոլշևիկյան «Պրավդա» թերթը, անարգանքի սյունին գամելով Թուրք ջարդարարներին, ընդգծել է. «Մեկ միլիոն հայեր իրենց կանանց ու երեխաների հետ սրի են քաշվել միայն նրա համար, որ նրանք հայ են»[28]։

---

[26] „La voix d'Armenie", 1918, № 7, էջ 217։

[27] Տե՛ս J. Lepsius, Deutschland und Armenien. Potsdam, 1919, էջ LXV. A. Mandelstam, Le sort de l'Empire Ottoman. Paris, 1917, էջ 408։ „La Cause nationale arménienne. Documents concernant le probleme de la liberation de l'Armenie Turque". Paris, 1945, «Դատավարություն Թալեաթ-փաշայի», էջ 146 և այլն։

[28] „Правда", 1918, 28 XI, № 258.

Զոհերի ընդհանուր թվի մասին ամբողջական պատկերացում են տալիս այն տվյալները, որոնք բերված են Գերմանիայի կայզեր Վիլհելմ II-ի կառավարությանն ուղղված հայկական ազգային խորհրդի դիմումի մեջ. այստեղ նշվում է, որ Թուրքիայի տերիտորիայից ու Հյուսիսային Իրանից թուրքական, իշխանությունների կողմից աքսորվել ու ոչնչացվել են 1.397. 350 հայեր[29]։

Այսպիսով, 1915—1916 թթ. ընթացքում երիտթուրքական կառավարության կողմից ձեռնարկված հայաջինջ գործողությունների հետևանքով մեկ և կես միլիոն հայեր արտաքսվեցին իրենց հայրենիքից։ Նրանցից մեկ միլիոնից ավելին սպանվել կամ զոհվել է սովից ու համաճարակից Միջագետքի ճանապարհին և բուն աքսորավայրում։ Այն հայերը, որոնց հաջողվել էր կենդանի մնալ, բնակություն հաստատեցին Սիրիայում, Միջագետքում, Եգիպտոսում, մասամբ էլ գաղթեցին եվրոպական երկրները, ԱՄՆ և Հարավային Ամերիկա։ Արյունոտ, գազանային եղանակով երիտթուրքերը «լուծեցին» հայկական հարցը։ Մեծ եղեռնից հետո արյունարբու Թալեաթ-փաշան պաշտոնապես հայտարարեց, թե «չկա այլևս հայկական հարց, քանի որ չկա նաև հայ»։ Մաքրելով Արևմտյան Հայաստանն ու Կիլիկիան հայ ազգաբնակչությունից, երիտթուրքական կառավարող շրջանները «վերացրին այն խոչընդոտը», որը, նրանց կարծիքով, խանգարում էր իրենց պանթուրքական զավթողական ծրագրերի իրականացմանը։

Երիտթուրքերին հաջողվեց կատարել իրենց սև գործը զգալի չափով շնորհիվ այն դիրքի, որ գրավել էին եվրոպական տերությունները։ Կայզերական Գերմանիան՝ Թուրքիայի դաշնակիցը պատերազմում, շահագրգռված էր, որպեսզի Արևմտյան Հայաստանի բուն ազգաբնակչությունը՝ հայերը, քշվեն իրենց հայրենիքից, քանի որ գերմանական գաղութարարների կարծիքով, դա կնպաստեր Մերձավոր Արևելքում իրենց նպատակների իրականացմանը։

Գերմանական իմպերիալիստները երկյուղ էին կրում, որ պատերազմի ժամանակ հայկական ազատագրական շարժումը կարող է օգտագործվել Անտանտի կողմից Թուրքիայի դեմ, մի հանգամանք, որը կարող էր հանգեցնել Գերմանիայի դաշնակցի ռազմական ջանքերի թուլացմանը։ Բացի դրանից. հայերին Միջագետք, Բաղդադի երկաթուղու կառուցման շրջանն աքսորելը ևս համապատասխանում էր Գերմանիայի շահերին, քանի որ երկաթուղու շինարարություն ավարտելու համար նա ձեռք կբերեր էժան բանվորական ուժ։

Միևնույն ժամանակ գերմանական ժողովրդի մեջ Թուրքիայի՝ որպես Արևելքում Գերմանիայի դաշնակցի հեղինակությունը պահպանելու համար կայզերի կառավարությունն ամեն կերպ աշխատում էր թաքցնել Թուրքիայի հայ ազգաբնակչության ոչնչացման ու տեղահանման իրողությունը։ Ստամբուլի գերմանական դեսպանությունը լկտիորեն ժխտում էր հայերի զանգվածային բնաջնջման փաստերը հայտարարելով, որ օսմանյան կայսրության մեջ իրականացված գազանությունները զուտ երևակայության արգասիք են[30]։

Պատերազմից հետո Լեփսիուսը գրեց, որ պատերազմի տարիներին արգելված էր գերմանական մամուլում նյութեր զետեղել կամ որևէ ձևով հիշատակել Թուրքիայում հայերի նկատմամբ գործադրված բռնությունների մասին։

---

29 Տե՛ս Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ, ֆ. «Քաղարխիվ», գ. 4657, թ. 113։

30 Տե՛ս Toynbee, էջ 111։

1915—1916 թթ. գտնվելով Ատամբուլում, Լեփսիուսին, շնորհիվ իր անձնական կապերի, հաջողվեց հավաքել բազմաթիվ նյութեր, որոնք բնութագրում էին Թուրքական իշխանությունների կողմից անցկացվող հայաջինջ քաղաքականությունը։ Այդ նյութերի հիման վրա նա 1916 թ. լույս ընծայեց իր հայտնի «Հաշվետվություն հայ ժողովրդի վիճակի մասին Թուրքիայում» գիրքը[31]։ Գերմանական գրաքննությունը, սակայն, չթույլատրեց նրան այդ հաշվետվությունը տարածել գրախանութների միջոցով։ «Այդ պատճառով էլ,— գրում է Լեփսիուսը.— ես կարողացա իմ հաշվետվությունը բաժանել միայն վստահելի անձանց»[32]։

Չնայած դաժան գրաքննությանը, երիտթուրքերի կողմից հայ ազգաբնակչության ոչնչացման մասին լուրերը ներթափանցեցին նաև Գերմանիա։ Մի խումբ գերմանական առաջադեմ գործիչներ հանդես եկան կոչով, որով դիմում էին կայզերական կառավարությանը, վերջինիս առաջարկելով ներգործել երիտթուրքական ղեկավարների վրա՝ հայերի կազմակերպված ոչնչացումը դադարեցնելու նպատակով։ Հիշյալ կոչը բռնագրավվեց գերմանական իշխանությունների կողմից[33]։

1915 թ. հունվարի 11-ին Թուրքական գաղանությունների մասին հարցումով ռայխստագում հանդես եկավ Կարլ Լիբկնեխտը։ Նա հասկացնել տվեց, որ դրանց պատասխանատվությունը ընկնում է նաև կայզերի կառավարության վրա, քանի որ ամբողջ աշխարհին հայտնի է, որ գերմանական սպաները ու գեներալները տեր ու տնօրինություն են անում Թուրքիայում[34]։ Սակայն Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության ձախ թևի առաջնորդի բողոքը չէր կարող փոխել կուսակցության աջ և ցենտրիստական ղեկավարության ընդհանուր դիրքը, որն ինչպես այս հարցում, այնպես էլ պատերազմի վերաբերյալ բոլոր հարցերում պաշտպանում էր իր երկրի իմպերիալիստներին։

Արևմտահայերի զանգվածային ոչնչացման լուրը կայծակնային արագությամբ տարածվեց ամբողջ աշխարհով մեկ՝ ամենուրեք առաջ բերելով բուռն զայրույթ և կտրուկ բողոքներ։ Նույնիսկ հայ ժողովրդի դահիճներից մեկը Ջեմալ-փաշան հետագայում ստիպված էր խոստովանել, որ «հայ գաղթականների նկատմամբ 1915 թ. կատարված հանցագործությունը միանգամայն արդարացի կերպով զարհուրանք առաջ բերեց ամբողջ աշխարհում»[35]։

Գերմանիայի պաշտոնական շրջանները այլևս անկարող էին թաքցնել կամ հերքել հայերի դեմ Թուրքական իշխանությունների գործադրած բռնությունները։ Ուստի նրանք փոխեցին իրենց գործելակերպը և փորձեցին նվազեցնել այդ չարագործությունների չափերը։ Գերմանական մամուլը, հակառակ իրականության, պնդում էր, որ օսմանյան կայսրության արևելյան վիլայեթներում «սպանվել են միայն խռովարարները»[36]։

Շատ երկրներում Գերմանիային հրապարակայնորեն մեղադրում էին երիտթուրքական գազանությունները խրախուսելու և դրանց իրականացմանն

---

[31] Lepsius J., Bericht über die Laga des armenischen Volkes in der Türkei, Potsdam, 1916.
[32] Lepsius, էջ V.
[33] „Армянский вестник", М., 1916, էջ 5։
[34] „Ferhanlungen des Reichstags". XII Legislaturperiode. Bd. 306, Berlin, 1916, էջ 512—513, Spartakusbriefe. Berlin, 1958, էջ 97։
[35] Джемаль паша, էջ 236։
[36] Гиббонс Герберт-Адамс, էջ 13։

անմիջականորեն մասնակցություն ունենալու մեջ[37]։ Հիմնվելով ականատեսների ցուցմունքների վրա, Գիբոնսը գրում էր, որ Վանում, օրինակ, գերմանական սպան անձամբ ղեկավարում էր հայկական խաղաղ բնակավայրերի, գյուղերի վրա տեղացող թուրքական հրետանու կրակը, իսկ գերմանական հյուպատոսները Թուրքիայում ամեն կերպ պաշտպանում էին հայերի դեմ ուղղված ճնշումները[38]։

«Temps» թերթը 1917 թ. դեկտեմբերի 17-ին հաղորդում էր, որ գերմանացիները ոչ միայն հրահրում էին թուրքերին հայերի դեմ, այլև անմիջական մասնակցություն ունեցան այդ չարագործություններին։ Զեյթունում գերմանական հյուպատոսը հայերին համոզեց զենքը հանձնել, որից հետո ժանդարմները սրի քաշեցին անզեն հայերին։ Նույնանման փաստեր է բերում նաև Բրայսը։ Հալեպում հայերի ոչնչացումը իրականացվում էր գերմանական հյուպատոսի ներկայությամբ։ Գերմանացիները նպաստեցին հայերի ջարդին նաև Դորթ-Յոլում[39]։ Գերմանական գեսպան Վանգենհայմը մեծ վեզիր Սաիդ Հալիմին հասցեագրված 1915 թ. հուլիսի 4-ի հուշագրում իր հավանությունն էր հայտնում Արևելյան Անատոլիայից հայերին արտաքսելու միջոցառումներին[40]։

Գերմանիայի բուրժուական մամուլը գործածության մեջ առավ Թուրքիայում իբր նախապատրաստվող հայկական ապստամբության վերաբերյալ օսմանյան կառավարության կողմից տարածվող միանգամայն ստահոդ վարկածը։ Գերմանիայի կառավարող շրջանների գլխավոր օրգաններից մեկը՝ «Deutsche Tageszeitung» թերթը հրապարակեց հետադիմական հրապարակախոս Ռեվենտլովի հոդվածը, որտեղ ասվում էր, որ հայերի զանգվածային տեղահանումը «անհրաժեշտ քայլ է ու Թուրքիայի սեփական գործը»[41]։

Համաշխարհային պատերազմում Գերմանիայի կրած պարտությունից հետո բուրժուական գործիչները ամեն կերպ ջանում էին հաստատել օսմանյան կայսրության հայ ազգաբնակչության զանգվածային բնաջնջման գործում Գերմանիայի անմեղսակից լինելը։ Այսպես, օրինակ, Էրցբերգերն իր հուշերում պնդում է, որ իբր Գերմանիան ամեն ինչ արեց 1915—1916 թթ. հայկական ջարդերը կանխելու համար, սակայն թուրքական կառավարությունը չունկնդրեց նրա խորհուրդներին։ Կեղծելով փաստերը, Էրցբերգերը գրում է. «Գերմանական կայսրությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի տխուր իրադարձությունների համար»[42]։

Ինչպե՞ս վերաբերվեցին հայերի հանդեպ թուրքական կառավարողների ձեռնարկած վայրագություններին Անտանտի պետությունները։ Երբ ամբողջ աշխարհով մեկ տարածվեց Օսմանյան կայսրությունում կազմակերպված հայերի հրեշավոր ջարդի լուրը, Անգլիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի կառավարությունները, որոնց բանակներում կռվում էին 200 հազարից ավելի հայեր, 1915 թ. մայիսի 11-ին հրապարակայնորեն հայտարարեցին Բարձր Դռանը, որ բոլոր այդ հանցագործությունների պատասխանատվությունը իրենք վերա-

37 Անտանտի երկրներում այն ժամանակ բարձրացված պրոպագանդիստական կամպանիան հաջողություն ունեցավ և Գերմանիային բարոյա-քաղաքական զգալի վնաս հասցրեց։

38 Гиббонс Герберт-Адамс, էջ 27։

39 Bryce, էջ 26։

40 Lepsius, էջ XXVIII.

41 Վրացական ՍՍՌ կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 2, ց. 1, գ. 3198, թ. 53։

42 Էրցբերգեր, էջ 84։

գրում են Թուրքական կաբինետի բոլոր անդամներին, ինչպես նաև տեղական իշխանությունների այն ներկայացուցիչներին, որոնք մեղավոր էին հայերի զանգվածային ջարդերում[43]։

Անտանտի Թղթե բողոքները, իհարկե, ի վիճակի չէին կանգնեցնելու երիտթուրքական դահիճներին կամ որևէ չափով սահմանափակելու նրանց հանցավոր գործունեությունը։ Անհետևանք մնացին նաև Ստամբուլում ԱՄՆ-ի այն ժամանակվա դեսպան Մորգենթաուի՝ հայերին պաշտպանելու նպատակով միջամտության փորձերը։ Ի պատասխան նրա բողոքների, Թալեաթ փաշան անվրդով հայտարարել էր. «Մեզ մեղադրում են այն բանում, որ մենք տարբերություն չենք դնում անմեղ ու մեղավոր հայերի միջև. դա բացարձակապես անհնարին էր, որովհետև այսօրվա անմեղները կարող են վաղը մեղավոր դառնալ»։

Ամբողջ աշխարհի առաջադեմ հասարակայնությունը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին անարգանքի սյունին էր դամում երիտթուրքական մարդասպաններին և իրենց կառավարություններից պահանջում վճռական քայլերի դիմել արևմտահայերին պաշտպանելու համար։

«Քաղաքակիրթ աշխարհը,— գրում էր հայտնի անգլիական բուրժուական պատմաբան Թոյնբին,— չի կարող թույլատրել, որպեսզի այդ հանցագործությունները շարունակվեն»[44]։

Ռուսաստանի, եվրոպական ու ամերիկյան երկրների պարբերական մամուլում հաճախ հոդվածներ ու հաղորդումներ էին զետեղվում արևմտահայերի վիճակի մասին։ Դրանցում լայնորեն լուսաբանվում էին թուրքական իշխանությունների չարագործությունները։ Բողոքի բազմամարդ ցույցերում ելույթ էին ունենում ականավոր հասարակական ու պետական գործիչներ, որոնք զայրույթով դատապարտում էին Թուրքիայի կառավարողներին ու նրանց գերմանական գործակիցներին։

Պետք է նշել, որ Անտանտի երկրների կառավարությունները հասարակայնության արտահայտած զայրույթն ու նրա բազմաթիվ բողոքներն օգտագործեցին որպես պրոպագանդայի միջոց՝ ընդդեմ Թուրքիայի ու Գերմանիայի։ «Հայ արյան գետերը, մինչև աստղերը բարձրացած հայ տառապանքների հեծեծանքները,—ընդգծել է խոշոր պատմաբան Լեոն,— շահագործում էին՝ Գերմանիայի դեմ կռվելու համար։ Քանի դեռ կանգուն էր ուժեղ ու հաղթական Գերմանիան, հայկական սարսափները նրա հակառակորդներին հարկավոր էին՝ նրան վարկաբեկելու, նրան բարոյապես ստորացնելու, նրան բարբարոսության կողմնակից և հովանավոր ցույց տալու, իսկ իրենց՝ նահատակ ազգերի պաշտպան և ազատարար հայտարարելու համար։ Բայց հենց որ Գերմանիան ջարդվեց և այլևս ոչ ոքի երկյուղ ներշնչել չէր կարող՝ իսկույն մոռացվեց հայն էլ, իր տառապանքն ու արյունն էլ»[45]։

Հայ ժողովուրդն իր երկարամյա դառը փորձով համոզվեց, որ եվրոպական տերություններից որևէ իրական օգնություն ստանալու նրա հույսերն իզուր

---

[43] „Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительства 1878—1917 гг.", серия III, 1914—1917 гг. т. 8, ч. 2, էջ 400, փ. № 724։

[44] Toynbee Arnold. Nationality and the War. London, 1915. էջ 387։

[45] Լ. Լ ո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 347։

են, ուստի և թուրքական իշխանություններից կրած դաժան հալածանքների օրերին նա ամենից առաջ հույսը դնում էր ինքն իր վրա։ Երբ թուրքական կառավարությունը փորձում էր գինաթափ անել խաղաղ հայ բնակչությանը, մի շարք տեղերում՝ Վանում, Շատախում, Մուշում, Զեյթունում, Շապին-Գարահիսարում և այլուր հայերը հերոսական դիմադրություն ցույց տվեցին ոստիկաններին ու թուրքական կանոնավոր զորքերին։ «Չնայած թուրքական կառավարության կեղծ հաղորդումներին,— գրում էր Մանդելշտամը,— ոչ մի հայկական հեղափոխություն կամ ապստամբություն չի եղել։ Հայերը զենք վերցրեցին միայն այն ժամանակ, երբ նրանց սպառնում էր ջարդը»[46]։ Հետագայում այդ բանը ստիպված էր խոստովանել Մեվլան-զադե Ռիֆաթը, մատնանշելով, որ ամենուրեք կազմակերպվող հայկական ջարդերը հայերին ստիպեցին առանձին տեղերում դիմել ապստամբության՝ ինքնապաշտպանության նպատակով[47]։

Եզրափակենք. արևմտահայերի բնաջնջման պլանը իթթիհատականների կողմից մշակված է եղել նախքան առաջին համաշխարհային պատերազմը և անմիջականորեն կապված էր նրանց պանթուրքական նվաճողական ձգտումների հետ։ Իթթիհատական ջարդարարների վայրագ ծրագրի իրագործման արդյունքն այն եղավ, որ Արևմտյան Հայաստանն ու Կիլիկիան դատարկվեցին հայությունից։ Նահատակվածների թիվը անցավ մեկ միլիոնից։ Թուրք բարբարոսների հայաջինջ քաղաքականությունը իրագործվեց կայզերական Գերմանիայի հովանավորությամբ։ Անտանտի պետությունները, բացի թուրքական կառավարությանը ուղղված բողոքի նոտայից, ոչ մի վճռական քայլի չդիմեցին ջարդերը կանխելու համար։

МЛАДОТУРЕЦКАЯ ПОЛИТИКА ИСТРЕБЛЕНИЯ АРМЯН В 1915—1916 ГОДАХ

Доктор историч. наук Е. К. САРКИСЯН

(Резюме)

Для осуществления своих пантюркистских и панисламистских агрессивных планов правящие младотурецкие круги вовлекли Турцию в первую мировую войну. Первоочередным объектом их экспансионистской политики было Закавказье, поскольку оно рассматривалось ими как плацдарм для захвата Северного Кавказа, Поволжья и Средней Азии.

По мнению турецких агрессоров, главной помехой на этом захватническом пути являлся армянский народ. «Вклинившиеся» в мусульманский мир армяне, как неоднократно заявляли деятели младотурков, мешали «объединению» с Турцией мусульманского населения Кавказа и других районов России. По расчетам младотурков, истребление армян в Западной Армении и Киликии не только обеспечило бы захват Закав-

[46] Mandelstam, էջ 242.
[47] Մեվլան-զադե Ռիֆաթ, էջ 147։

казья, но и устранило бы предлог для вмешательства держав Антанты во внутренние дела Турции.

Воспользовавшись военной обстановкой, правящие круги Османской империи, под предлогом депортации армян из прифронтовой полосы, весной 1915 г. приступили к осуществлению давнишнего плана физического истребления западных армян. В результате осуществления турецкими палачами этого варварского плана геноцида армян Западная Армения и Киликия полностью лишились армянского населения. Жертвой турецких зверств стало более миллиона армян.

За это кровавое преступление младотурецких главарей морально-политическую ответственность несут также их союзники в войне — германские империалисты.

Страны Антанты, в армиях которых сражались свыше 200 тысяч армян, не предприняли никаких решительных шагов, чтобы пресечь геноцид армян. Такое отношение правительств стран Антанты к трагедии армянского народа лишний раз доказало, что они никогда не были защитниками интересов армянского народа, хотя каждый раз, когда нужно было оказать давление на турецкое правительство для осуществления своих планов в отношении Османской империи, они выступали в роли «покровителей» армян.